

Ծխելու խոտը

Ես ինձ չէի գտել,
իսկ նրանք թվում էին
իրենց գտած,
ես ուզեցի նմանվել նրանց,
ես ասես մեկն էի,
որ ափիս ոտքերը քշտած՝
լճի խորքում տեսնում էր
նրանց.

ես՝ սպիտակամաշկ,
նրանք՝ արևից վառված,
ես՝ անփորձ,
նրանք՝ փորձված:

Ես ուզեցի փորձել
ու վառեցի խոտը,
առաջին անգամ էի
բռնում ծխախոտը,
գլուխս պտտվեց.
չհասկացա՝ ծխի՞՞ց,
թե՞՞ ոգևորությունից
(ինձ զգում էի հասած),
բայց ծուխն առաջին
արագ անցավ,
իսկ ես չորս տարի մնացի
համալսարանի բակում
կանգնած:

Տարիներն անցնում էին,
փոխվում էին շենքերը,
բայց նրանք կրկին
ինձ հետ էին,
ու առանց ծխախոտ օրերն
անհերթեթ էին,
չէի հասկանում
ինձ դուր է գալիս հոտը
(չնայած սիրտս խառնում էր
առավոտը),
թե այդպես թաքցնում էի
մենակ լինելու ամոթը:

Մի օր էլ արթնացա՝
ծխից աչքերս ցաված,
կոպերս իջեցրի ու
ներս նայեցի,
երկար նայեցի...

հիասթափություն կար,
չեմ թաքցնի,
որ այդքան տարի՝ մոլորված,
ապրում էի ծխի մեջ կորած:

Ծուխը ցրեցի,
ինձ գտա,
աչքերս տրորեցի,
հասունացա,
հիմա էլ հաճախ փողոցում
տեսնում եմ խոտը,
բայց էլ չի ձգում
դրա հոտը:

Պոեզիա

Կենդանացում



Հրայր
Մանուկյան

